

ՁԱՒԱՆՈՒՄԻՆՈՒԹԻՒՆ

Պուշկարին	համար
Տարեկան	12 Պր.
Էկզուսիտ	6 "
Արտասահմանի	
համար տարեկան	15 "
Էկզուսիտ	8 "

Անկերիկայի	համար
Տարեկան	3 ՏՂ.
Էկզուսիտ	1.50 "

Մանուցումն տղր սուս զին ևրեսին համար 40 ս. իսկ վերջին ևրեսի համար 20 սակքիս և. ևրեսին ևրեսի սակքիս ևրեսի համար 20 Օ/Յ զեղչ կըլ լոյ :

Վստնայի համար 4 ռֆ և 10 սակքիս

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՏՆՆ ՔԱՂՊՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲԵԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ և նրան նրկե իմրագրութանու հասցեիև

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձևքի (20 ՍԱՆԹԻՄ) Պուշկարին համար ձևքի (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՇԱՐՋՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԿՈՒՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԱՎԱԲԵԿԻՉՆԵՐԸ

Ար և է յի գափոխական բանակի մը մէջ ամենէն առնականները, ամենէն անկեղծները անտարակոյս ահաբեկիչներն են. Այն օրէն, երբ մարդ յեղափոխական սպարտէզ կրկնայ, պարզ է իրեն համար, որ բոլոր այն ճամբաները, ուր ան կը քարոզէ ու կը քալէ, զինքը դէպի մահ կամ աքսոր կառաջնորդեն. Եստ սակաւթիւ Ին այն բազմաւոր յեղափոխականները, որոնք կառափնատներէն ու թիարաններէն ազատուելով՝ բնական մահով մը կը մեռնեն, և կամ, որ չէ՛տ հազուադիւրէն է, իրենց իսկ ձեռքով սկսած յեղափոխական գործի պսակազրուութեանը կը մասնակցին :

Ուայց բոլորովին այլ է ահաբեկիչ-յեղափոխականի ճակատագիրը. Անոր կեանքն ամենէն կարճն է, սակայն և ամենէն բեղմնաւորը : Ան յեղափոխական բանակի առաջապահ գունտն է. անոր հպարտութիւնն ու պատիւը : Ան դէպի անխուսափելի մահը կը քալէ աւելի ուղիղ, աւելի համարձակ ճամբաներով : Ան շատ քիչ և երբեմն բնաւ իր սգատման յոյսը իսկ չունի : Արդէն անոր ամբողջ կեանքի նըպատակը, անոր փառքը կը կալանայ այն վայրկեանին մէջ, երբ ան մտհոռան գատապարտուած լրտեսին, դահճին, կամ բռնակալին հետ, ճակատ ճակտի կը գտնուի. Իսկ երբ արգէն դաշոյնի հարուածներէն կամ ատրճանակի գնդակներէն հրէջր իր ոտքերուն տակ տապալուած է, ան դիտէ, որ ազամանդէ անուն մը ու յիշատակ մը կը թողու իր ազգին ու բովանդակ աշխարհին : Եւ ատոր համար է, որ յաճախ ահաբեկիչ հերոսը իր անմեղ բարեկամներու և ազգակիցներու շարքարանքն ու շղթայումը ինքկատի ունենալով, արիւնէն ու կրակէն դեռ տաք դաշոյնն ու ատրճանակը անձամբ կը յանձնէ

ուստիկանութեան, յայտարարելով պաղարին հպարտութեամբ իր գործած արդարութիւնը... Ինչ խնկէլի սիրտ : Եւ մեր հինաւորաց արեւին տակ վիտացող այսքան միլիոնաւոր անհատներու մէջ, արդեօք քանի՞ մարդ այնքան առիւծաբար իջեր է գերեզման, կրկնէ ու պլտի իջնէ, քան ահաբեկիչը... Երջանիկ ծնունդներ :

Թերեւս կարծեն ոմանք, թէ ահաբեկիչները, որոնք այնքան անվեհերութեամբ ու սառնասրտութեամբ դաշոյնի և ատրճանակի հետ կը խաղան, անգուժմարդիկ են : Ո՛չ, այդ սխալ է : Ահաբեկիչին դէմքը իր արեւի պայծառութեան մէջ կը շողշողայ և կը զարդարուի այն բոլոր անձաններով, որոնցով դարբրու երեւակայութիւնը Աստուածը մարդոցմէ տարբերեց, երբ մարդ խոր կերպով բժշկուէ այն շարժառիթներն ու հոգեկան այն վիճակը, որոնք իբրեւ նուիրական շահեր ահաբեկիչ մը ժողովուրդի ծոցէն կառաջնորդեն դէպի մութին մէջ գործող լրտեսը, դահիճը և բռնակալը. Ինչպէս կըրնայ ահաբեկիչ մը անգուժ ըլլալ : Քանի որ ան ոչ թէ անձնական հաշիւներու համար է որ իր երիտասարդ կեանքը բացարձակ վտանգի կը դնէ, այլ մատնուած սրբազան գործի մը, շարժարտած ժողովուրդի մը և բռնաբարուած իրաւունքներու համար : Ան գործած արտայայտութիւն է ժողովուրդի մը իժադած վրէժին և արդար զարթոյթին : Ան աստուայունչական այն հրեղէն սուրն է, որով յեղափոխական բանակ մը իր շարքերը մաքրելով՝ դէպի նպատակի գագաթները ճամբայ կը հարթէ : Ահաբեկիչը անկուժ է, այո՛, և անուղք, դաւաճանին, դահճին և բռնակալին առաջ, մինչդեռ նոյն ահաբեկիչը քրիտոսական անձնուիրութիւն և սիրտ ունի : մատնուածին, զոհին և բռնաբարուածին համար : Գեռ աւելին կըսենք, ահաբեկիչը գուժ ունի նոյնիսկ մահ-

ուան գատապարտուած վատի մը մտերիմներուն համար, բաւական է որ անոնք գործին մէջ ուղղակի մատ չունեցած ըլլան : Գեռ թարմ են այն ահաբեկիչներու գերեզմանները, որոնք Գալիցիայի կնոջ կեանքին չը դպչելու համար, մաքառուը երկարացուցին և առանց նպատակներուն հասնելու իրենք կողակներու գնդակներէն հոգեբուն մխուցան : Այդ սպայեականութիւնը աշխարհը հրացուց և իրենց արեւ դէմքերը ծիածաններով բուրբեց :

Եւ վերջապէս մի՞թէ ահաբեկիչ մը որ որ և է վճռական քայլ կրնայ առնել, թէ անպայման օրէն մաքուր մարդ չըլլայ, աննեղ սիրով սիրած չըլլայ այն ժողովուրդը, որու կողմէն վրէժ առնելու կը ներկայանայ, և կամ անկեղծութեամբ պաշտած չըլլայ այն գաղափարները, որոնց պաշտպանութեան համար իր կեանքը յաժարական կուտայ : Եւ անոնց յաւիտենականութեան ըլլալուն իբրեւ անմուռն վկայ իր գիակը կը թողու սերունդներուն :

Ահաբեկիչները յեղափոխական վեհտեան տաճարի մտքմարեղէն քուրմերն են, որոնց յեղափոխական խարոյկը շարունակ վառ պահելու երանելի պաշտոնն է տրուած : Իսկ անոնց գերեզմանները յեղափոխական ժողովուրդի մը փառքի գագաթներն են, որոնց կատարներուն վրայ իտէալի և ազատութեան արժիւնները իրենց բոյնը կը դնեն : Երջանիկ գերեզմաններ :

Հայ Յեղափոխութեան այդ գրոշակակիր ճերմակ յովազներէն մէկն ալ այսօր կո՛ղայ իր անունը հայկական Պանթէոնին սե՛ւ մարմարէ պատին վրայ ազամանդէ քարերով յաւերժացնելու : Ատրճանակի վեց հարուածներով անչնչացեր է վատ փոխնահանգապետ մը, որ իր գաւառի հայուն գերեզմաններ, արցունք ու թշուառութիւն պարգեւեց : Իսկ ահաբե-

կիչ հերոսը՝ աղա՛տ է :

Այդ լուրը անշուշտ հայ տրիւրած սրտերուն խորերը ուրախութեամբ յուզեց, վշտաբեկ մայրերուն արցունքին մէջ վրէժը իր ծիածանը կապեց, իսկ դաշնակցական կուռ շարքերուն միջով հպարտութիւնը թեւաբախեց՝ անոնց հոգիները ցնցելով, որոնք յանուն թշուառ հայ ազգի բարօրութեան համար սկսուած պայքարը իրենց կեանքի գնով շարունակել անգամ մըն ալ կերդնուն շարքերը աւելի ու աւելի սեղմելով :

ԳՆԱԶՍԿԻ ՓՈՒՆՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՍՊԱՆՆՈՒԹԻՒՆԸ

Այս վերնագրով հետեւեալը կը կարդանք Ն. Ֆ. Պ. ի մէջ :

Կովկասի և Անդրկովկասի մէջ ոռոսական բարձր պաշտօնեաներու սպաննութիւնը վերջերս գրեթէ համաճարակի մը բնաւորութիւնն է ստացեր : Սկսած Կովկասի ոռոսական ուժը ներկայացնող ընդհանուր կառավարիչ իշխան Գալիցիայի վրայ կատարուած սպաննութեան փորձէն, հակառակ կամ շնորհիւ կեղքոնական կառավարութեան ձեռնարկած միջոցներուն՝ սպաննութիւններու թիւը շատցած է : Էջմիածնի մէջ, ուր հայոց ընդհանուր հայրապետ Մկրտիչ Ա. ի աթոռը կը գտնուի, շատ ժամանակ զեռ չէ անցած՝ օր ցերեկով փողոցին մէջ շրջանական կառավարիչ գնդապետ Ծմերլինկը ատրճանակի հարուածներով մահամերձ վիճակուեցաւ, Կովկասի մէկ ուրիշ քաղաքի մը մէջ կեղքոնական իշխանութեան բարձրագոյն ներկայացուցիչ մը սպանուեցաւ :

Մէկ քանի օր առաջ գաւառի իր կողմէ փորձ եղաւ, թիֆլիսի սպայակոյտի նախագահը՝ գնդապետ Կատրուկովը, ուժանակաւոր ուսմբով մը սպաննելու : Այս գործը գլուխ չ'եկաւ, ստացած դժոխային մեքենան՝ կասկածելով հանգաբաններու բանալ տալով, Բայց ոռոսական հիմնարկութիւններն ու կառավարչական հաստատութիւնները Կովկասի մէջ նոյնպէս այս վերջերս սկսան յաճախ յարձակման ենթարկուիլ : Անգամ մը բոստի հիմնարկութիւնը, անգամ մըն աք երկրագործական գանձարանը, ուրիշ անգամ մալ ոռոսական դրամա-

տուն օր ցերեկով զինուած մարդկան-
ցով կոխուեցան և թալանուեցան: Ա-
նպահովութիւնը այն աստիճանի հա-
սաւ, որ Վլատիկովկասի մարդատար
զնայքները յայժմ ժանտարմներով ու
ոստիկաններով են պաշտպանուած...

Կազմակերպիչ մէջ իրերու ոչ բնական
դրութիւնը առաջացուց անցած տարի
Պեդերմուրդէն կարգադրուած հայոց
եկեղեցապատկան կալուածներու: զը-
րուածան կարգադրութիւնը և անոր
խառնութեամբ զործադրութիւնը:
Գովկասահայերու մէջ մասնաւորապէս
յուզուած և զանուցութիւն առաջացու-
ցեր է այն իրողութիւնը, որ հայե-
րու ձերտի հայրապետ Մկրտիչ Ա. Ը
Պետերբուրգէն այդ տեսակ անուշա-
գիր մտալ կրնար: Օրինակ, անոր պա-
ղատագիրն խնդրագիրը ուղղուած Յա-
րին, անոր ներքին զործերու նախա-
րար Պ. Փօն Պէլիգէնի գէլպի Պետերս-
բուրգ ճամբորդութիւն մը խնդրելը
—ասոնք բոլորը սերտուեցան: Դեռ
աւելին, նախարար Փօն Պէլիգէն հայ-
րապետին սպառնացաւ՝ թէ իր իւրե-
քիքներն պնդուած ծարիր կամքին դէմ
անարգանք մը պիտի նշանակէ: Այն
դատապարտութիւնները, որոնք գոր-
ծադրուեցան հակառուսական ցոյցեր
կազմող հայերու դէմ, դառնութիւնը
հայկական խաւերու մէջ միայն աւե-
լի զօրանալու ծառայեցին: Փոխ-նա-
ցանգապետ Անտրէիվը, որ երեկ զոհ
գնաց անաբեկչի գնդակին, մէկն էր
այն պաշտօնաններէն, որոնք նախա-
րար Փօն Պէլիգէի հայերու նկատմամբ
մշակած քաղաքականութիւնը խիստ
կերպով կը զործադրեն, և որ զրգը-
ուած մտքերը հանգստացնելու համար
Անդրկովկասի մէջ կամ տգիտութե-
նէ և կամ Փօն Պէլիգէի սիրուն հա-
մար ոչինչ ընել չեն ուզեր: Անտրէիվի
մահը աւելի ապացոյց մըն ալ կուտայ,
թէ որքան կարճատեան են Ռուսաստ-
անի այն քաղաքագէտները, որոնք ան-
կեղծ հայրենասէրներու ձայները բո-
լորովին մտրկ ընել չէին ուզեր, ու-
րոնք ջնջմ կերպով կը պաշտպանէին
մեզմ վարուեցողութիւնը բոլոր ոչ-
ուսներու հետ...

«ՀԱՅՐԵՆՍԻՒԹԻ ԳԱՂԱՓԱՐԸ»
(Հեղինակ Միխայիլ Վարդանյան.
Եպագրութիւն Հ. Յ. Դաշնակ.)

Ամբողջութեամբ համար մեր միտքը
ազգայնական գաղափարներու մասին,
աւելցնենք որ «համազգայնութիւն»
ընելով մենք կը հասկնանք նախ՝
ջնջուած այն սահմանագծումներուն
զորս կը վայելեն որոշեալ տեղերու
մէջ որոշեալ պայմաններ լրացնող
մարդիկ, յետոյ՝ ջնջուած նաեւ այն
դատարարականութեան և ընկերական
միջավայրին, որոնք ունէ կերպով
յառաջ կը բերեն ազգայնական նա-
խապաշարութիւնը: Որովհետեւ այդ
սահմանագծումները, այդ կոյր դաս-
տարարականութիւնը եւ այս երկուքին
չնորհիւ ստեղծուած յոռի միջավայրն
է, որ հայրենիքի գաղափարին սուր
հանգամանք կուտան և աղէտներ
կը ծնին:

Ստուգիւ, գերմանացի, հայ,
անգլիացի, ֆրանսացի եւն անուն-
ները չեն որ ինչնին՝ ազգերու մէջ
լարուած յարաբերութիւններ կրս-
տեղծեն և ժողովուրդներու մէջ
կեղծ գրութիւն մը յառաջ կը բե-
րեն, եթէ անոնց նետ կապուած չըլ

ԶԱՅՆ ՄԸ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԷՆ
Ուրվիս Յունիս 15 1904

Չեզ եմ գիտում համեստափայլ հա-
յուհիներ, թանկագին ընկերներ և
սիրելի հայրենակիցներ: Ինչքան էլ
յուսահատական ճիշեր լսէք հայերիս
վերաւորուած սրտից, մեր ներկայ ա-
րեւնալի գրութիւնից. չը յուսահատ-
ուէք: Ձեր մտքում, բառարաննե-
րում ոչնչացրէք, ջնջէք յուսահատու-
թիւն բառը: Ամենիս յայտն է, որ
հայերիս գրութիւնը ներկայումս մի-
անգամայն անտանելի է. հայերիս հա-
լածում, չարչարում, կոտորում են,
բայց հայերս չունինք պաշտպաններ
կարեկիցներ: Սկսած Եւրոպական քա-
ղաքակրթութ, լուսաւորեալ ազգու-
թիւններէն, մինչև արբարոս միա-
պետական տէրութիւնները, բոլորն
էլ առանց բացառութեան ի թշնամի-
ներ են մեզ: Մենք հայերս ներկա-
յումս չ'ունինք աղատ պատուարներ,
որտեղ կարողանանք հանգիստ շունչ
քաշել, սպրիլ իրեւ մարդ, ինչպէս
Եւրոպայի մարդու իրաւունքն է:

Չէ պատահել պատմութեան մէջ մի
էջ, որ հայերս, այսքան հալածուած
տանջուած, յուսահատական գրու-
թեան մէջ ինչէնք ինչպէս ներկայումս
է: Լինգթէմուրի, Ալիփալանի,
Ջինգիզ-խանի, Շահարասի արած բար-
բարութիւնները, հալածանքները,
կոտորածները, եթէ համեմատենք,
ներկայ մամանակուայ արածներին
հետ, միանգամայն կը տեսնանք Ս
տար լուսաւոր ազգերը հայերիս հա-
մարելով անտէր տարր քրիստոնէա-
կան և բարեգործական դիմակի տակ
ամէն կերպ աշխատուած են օգտուել-
իսկ ներկայիս երկու բարբարոս միա-
պետները — Կայմիր, Սուլթանը և Յար
Սուլթանը — մեզուում նկատելով ոյժ,
ազգայնական մի կայ նպատակ են
գրել հիմնովին կործանել այդ ոյժը,
և միանգամայն կտրել ազգայնական
այդ կապը. որ հայերս ձեռք ենք բե-
րել արեւնով և պահպանելով ամբողջ
16 դար շարունակ դարձեալ արիւն
թափելով:

լան բազմաթիւ զիրար հակասող տը-
րամադրութիւններ որոնք գաղափա-
րը նախապաշարում կը վերածեն:
Իւրաքանչիւր ազգի դատարարակու-
թիւնը, փոխանակ ծանրանալու ի-
րեն սեփական այսինչ աշխարհակա-
լին, այսինչ զօրավարին կամ ար-
քային սիրագործութեանց վրայ:
որոնք մարդկութեան գուցէ ամենէն
վայրագ վայրկեաններ կը մարմնաց-
նեն, փոխանակ անոնց օրինակով
նոր սերունդները ոգեւորելու եւ ա-
տելութիւնը մատաղ սրտերու մէջ
յաւերժացնելու, նոյն խանգալա-
ուութեամբ եթէ աշխատի ճանչնել
մարդկային քաղաքակրթութեան ճըշ-
մարիտ հերոսները որոնք իրենց գիւ-
տերով կամ հանճարին արտադրու-
թիւններով հսկայական կոթողներ
կանգնեցին յառաջդիմութեան տիե-
զերական ուղիներուն վրայ, եթէ
քաղաքագէտները փոխանակ մարդոց
ընկերական յարաբերութիւնները
սեղմելու, աւելի լայնսիրտ, համա-
տեա ու մարդկային պայմաններ տեղ
ծէին ապրելու համար, անշուշտ այլ-
եւս տարազգութեան երկիւղը պիտի
փարատի և գերմանացի մը — օրինա-
կի համար — այնքան կարեւորութիւն
պիտի ընծայէ իր այդ ցեղական ա-
նունին, որքան այսօր կընծայէ հայը
իր ունեցած աւելի մեծ ցեղական

Եւ այդ կապը մեզ հայերիս համար
շատ թանգ և մեր ամենիս սրտին մօտ
— կրօնն է: Հայերս բարբարոս միա-
պետ կարմիր Սուլթանի և Յար Սուլ-
թանի աչքում օրուայ շարիք, աչքի
փուշ ենք դարձել և նրանք էլ օր-
ուայ հարցն են դարձրել հայերիս
իննել չը լինելը: Հայերս, հայուհիներ
չը պէտք է յուսահատուինք: Մենք
պէտք է մեր սովոր, գործունէու-
թեամբ, միմեանց պաշտպանելով սի-
րելով և մեր գաղափարական կու-
ղը ցոյց տանք մեր թշնամի բարբա-
րոս միապետներին, որ այո՛ր, գոյու-
թիւն ունի մի ոյժ և արիւնով ձեռք
բերուած ազգայնական թանկագին
կապ, բայց ոչնչացնել այդ ոյժը.
Կտրել այդ կապը այնքան էլ հեշտ չէ
ինչպէս երեւակայում էք: Դեռ շատ
արեւն կը հոսի Արարատեան դաշ-
տում, Սասնոյ լեռներում, Տաւրոսա-
կան բարձրութիւններում, Վասպու-
րականում, Կարնոյ բարձրաւանդա-
կում, բայց հայը հողուով, իրեն գոր-
ծունէութեամբ կը մնայ միշտ հայ:
Որովհետեւ ինչ բան որ թանգ է
պետուած, լեռան չի ձայնուի, ինչքան
արիւնով կեանքով է ձեռք բերուած,
արեւնով ու կեանքով միայն կարելի
է յետ ձեռք բերել: Բայց քանի որ
մեր կոյր արքայութիւն է թշնամու
պահանջը ու վարձուածքը անարգար,
բոլորին էլ յայտն է, որ արգարու-
թիւնը միշտ կը յաղթանակէ:
Միայն չը յուսահատուինք...

Գ. Օսեւնյան

ԹԵՂԵԱԿՅՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍՃՈՒԹԷՆ ԱՐՁԱԿԱՆԳ

Ռուսներ, 5 Յուլիս 1904

Քաղաքիս Մերսոպեան վարժարանի
Պատ. Հոգաբարձութիւնը՝ ցանկալով
արժանավայել յարգանք մը մատու-
ցանել երկու հոյակապ երախտաւոր-
ներուն — Ահալկ Պարթեի և Մերսոպ
մէկ անունին:

Մենք հաւատացած ենք որ մի-
ջազգայնութիւնը այս հիմերու վը-
րայ միայն իր գոյութիւնը կը պնդէ:
Ու ասիկա ցնորք մը չէ, ոչ ալ իւ-
րոյնի, այլ քաղաքական ամէն ճըզ-
տութեան պէս, ժամանակի ընթաց-
քին մէջ իրականափ ծրագիր մը գոր-
անիրաւութիւն է արհամարհել ծաղ-
րել կամ դատապարտել:

Պ. Վարանդեան անցնելով ընկեր-
վարական սկզբունքներու եւ ազգայ-
նական գաղափարին փոխադարձ վեր-
լուծումին, ընդերկար կը պարզէ
մեզ ընկերվարութեան զանազան
փուլերը՝ իր կազմակերպումէն մին-
չեւ մեր րբերը: Պատմական այսփո-
շըջանի մը, ուր ազգայնամօլութիւնը
սարսափելի կատաղութեան հասած՝
ատելութիւն ու արիւն կը պոսթ-
կար մղեցնաբար. իբր նախազգակ,
ինչպէս առ հասարակ կը պատահի,
իշուատութեան ու արցունքի հեղեղ-
ներով խմորուեցաւ ընկերվարու-
թիւնը որ բարձուածը կուտեցր օտն-
տեսական ու բարոյական հարստահա-
րութեանց՝ բոլոր ձեւերուն ու կը
խոստանար ընդհանուր խաղաղու-
թեան ու եղբայրութեան վեհ խաչա-
ներ: Պ. Վարանդեան ընդերկար
ցոյց կուտայ մեզ այն սկզբունական

Մտայնոյ — իշխատակին և սիրանգա-
մայն հայ գրերու գիւտին 1500 ամ-
եակը տօնել, քանչիւր երկրորդ մը
կազմակերպած էր՝ որ երէկ (4 յուլի-
կիրակի) տեղի ունեցաւ Պ. Ահալկ
Չաքրեանի բարձրագիւր և հովասու
պարտէզին մէջ:

Որոշեալ ժամուն, երկուսն հոծ
բազմութիւն մը փութացեր էր ներ-
կայ գտնուել այն երեկոյթին, որուն
մասնակցեցան քաղաքիս հայ երիտա-
սարդներու «Արաքս» նուագախումբը,
ազգային վարժարաններու սաներու
սանուհիները, և քաղաքային նու-
գախումբը:

Հակիրճ բայց գաղափարային
նախօսութեամբ մը, Տիար Ե. Յ. Ն.
երկրորդ բացաւ. յայտնեց թէ նա
գաբարձութիւնը, երեկոյթը սարքե-
լով, փափաքած է, Մերսոպեան վար-
ժարանի անուան սարեղարմին առ-
թիւ, գերեւն գիւտին 1500 ամեակը
տօնել և փորել Եւրասաց իտուլիթիւն
մը յայտնել երկու մ.ժ հայրապետու-
րուն անմահ իշխատակին: Ասոր վրայ
«Արաքս» նուագախումբը, որ հազն
տարիէ մը ի վեր գոյութիւն ունի
մեծ յաջողութեամբ զարկաւ քանի որ
թիւթուն կտորներ, որոնք
լուս տպուորութեւն թույլուցին հա-
գիսակներուն վրայ, Յետոյ, այս
կերտուելի մը, յուզիչ շեշերով, առ-
ասանեց «Մի վե՛ր շեշերով դու ի
զու» ոտանաւորը, և աշակերտ մը
իր ինքնազլը ճառովը, ի վեր հանց
Սահակի և Մերսոպի կատարած գործ
և ունեցած արժանիքը:

Առաջինին չափ յաջող անցաւ երե-
կոյթին երկրորդ մասն այս կապի Պ.
Վարանդեան բոլոր ներկաներուն լու-
սանկարը քաչեց, սպա՛ փոխն ի փոխ՝
քաղաքային և «Արաքս» նուագախում-
բերը, դպրոցականներու երգերու ըն-
կերակցութեամբ, հաւաքուալի հա-
ուածներ ամեցին և բուն նմանա-
րութեանց արժանացան:

Երրորդ մասը՝ որ աւելի հանրա-
ուիթ էր ու զուարթ, երեկոյին լու-
ցառիկ փայլ մը տուաւ: Գործիքի,
սէրանիթին, պուլար նէժ, իրենց

դաւանանքը զոր Մարքսին «Մանի-
ֆէստիս» մէջ ընկերվարութեան վար-
դապետները խանդավառօրէն կը քա-
ղաքային աղաղակելով. «բոլոր երկիւ-
րներու բրօշէրարները, միացէ՛ք
Մանրամասնօրէն վերլուծելով աղ-
եմանիֆէտիզմի պարունակութիւնը:
Պ. Վարանդեան «Թիւրիմացութիւն»
մը կանուանէ քայն, որովհետեւ ա-
նոր հեղինակները ազգայնական ազ-
ղակներու երկրորդական տեղ տու-
էին եւ միմիայն սղասակաբային
կուրնս էր որ իրենց ուշադրութիւնը
լարած էր ամբողջ Պ. Վարանդեան
կուզէ ցուցնել թէ՛ այդ յայտարարու-
թիւնէն ետքը ճիշդ հակառակ է
որ պատահած է աշխարհի մէջ, այս-
ինքն միշտ ազգայնական կուրնըր
տեղի ունեցած են: Իտալիոյ միու-
թիւնը, Հունգարիոյ, Հեհաստանի
Գերմանիոյ հսկայական ճեղքեր օտա՛ր
լուծը թօթափելու համար:

«Հայրենիքի Գաղափար» յարգով
հեղինակը կը մոռնայ սակայն որ
այդ ճեղքեր եղած են բանարարուած
ազատութիւն մը, յափշտակութեամբ ի-
րաւունքներ, զարպուած գոհացում-
ներ ձեռք բերելու եւ իշխող տարրին
տնտեսական ու բարոյական հարս-
տահարութեան ազատելու համար:
որպէսզի, յետոյ, իւրաքանչիւր ազգ
իր տան մէջ, իր եղբայրակիցներու

ակնախորհրդ տարածին տակ, կ'ողո-
ղէին հանդիսականները. հրաւիրու-
թէն, ջահագնացութիւն և լուսավո-
րութիւն իրարու կը յաջորդէին, բո-
լոր քաղաքի, հորա իրարու կը հե-
տապնդէին, հետագրիներ ու քարթ-
րութիւններ ասոցին անդին կը սուրա-
լին և վերջապէս փափկակերները
կուրսու կուրս կ'ըմբոստանային խնամ-
քով պատրաստուած խորտիկներ...
Պատ. Հոգաբարձութիւնը՝ այս սի-
րուն երկկողմով անգամ մըն ալ ա-
պացուցեց թէ ինք գործունեայ
մարմին մըն է և կրնայ գիտակցա-
բար վարել իր ստանձնած ծանր պաշ-
տօնը:

Եթէ չենք սխալիր՝ երկկողմէն գո-
յացած գումար հասոթին է 7-800 ֆր:

Մինչ մէկ կողմէն՝ ժրգան հոգա-
բարձութիւն մը կը ջանայ դպրոցնե-
րը բարոք վիճակի մէջ մտցնել, միւս
կողմէն՝ չենք եկեղեցին լքուած կը
մնայ: Թաղական ինքնուրոգը շատոնց
հրաժարած ըլլալով՝ եկեղեցին հոգա-
տարի կը կարօտի: Թէեւ քանի մը
սրտացու երիտասարդներ արժանեայ
թաղ. ինքնուրոգ մը գերը կը կատա-
րեն, սակայն գանձազան խոչնդոտնե-
րու կը բաղկին. եկեղեցապատկան
կալածներուն հասոյթները կարելի
չըլլար գանձել ի չգոյէ պաշտօնական
մարմին մը, եկեղեցիին վնասը՝ դպ-
րոցներուն ալ վնասն է: Մինչև վեր-
ջերս, եկեղեցին դպրոցներուն ամէն
ամիս կուտար 200 ֆր. արդ՝ կը լսենք
ի՞նչ հիմա հոգաբարձութիւնը չի գան-
ձեր սոյն գումարը: Չենք գիտեր թէ
այս շփոթ կացութիւնը մինչև ե՞րբ
պիտի տեսէ. սակայն ինչ որ աղէկ
գիտենք, ան ալ սա է թէ կարգ մը
պատր ջորի մէջ ձուկ որսացողներ,
մնցեալ ձմեռուան պէս, այս միջոցին
ալ սկսած են, մուր անկուններու
մէջ, բարբառնել թէ եկեղեցիին ան-
միտքար դրուած պատճառը՝ Հ. Յ.
Դաշնակցութեան Ռու. ճու. ըր կոմի-
տէն է. Ասիական շնական և անսով-
տու մըն է, զոր քաղաքիս Դաշնակ-

ցական կոմիտէն՝ 20 յունվար 1904
թուակիր Բուրջիկով մը՝ պաշտօնա-
պէս հերքեց, յայտարարելով թէ ինք
զուտ յեղափոխական մարմին մը մա-
սը կը կազմէ, հետեւաբար՝ չի մտնել
եկեղեցիի և դպրոցի շուրջը մզուած
պայքարներուն մէջ, Հոս, աւելորդ
չենք սեպեր հասկցնել բարբառնող ջա-
տուկներուն թէ Պայքանեան շրջանի
պատգամաւորական ժողովին որոշմամբ
արգիլուած է Պուլկարիոյ Դաշնակցա-
կաններուն, յանուն Դաշնակցու-
թեան, կոխ միկը եկեղեցական ու
դպրոցական խնդիրներու համար:

Ո՛վ որ ակնայ ունի՝ թո՛ղ լսէ:
ԱՆՆՈՑ

ՄԱԿԵՂՈՒԹՅՈՑ ՎԻՃԱԿ

Մակեղոնիայէն հասնող պաշտօնա-
կան տեղեկագրերը խիստ մոռայ
գոյններով կը ներկայացնեն երկրին
վիճակը:
Երկաթուղիներու վրայ կատար-
ուած վերջին երկու գումարգրութիւն,
ները պէտք է նախերգանք համարել
անցեալ տարուան դէպքերու վերակը-
սումին: Ամէն օր, լոյս ցերեկով ըս-
պանութիւններ կը կատարուին երկ-
րին բոլոր կէտերուն վրայ: Պուլկար
հրոսախմբեր ազատօրէն կը շրջագո-
յեն մակեղոնական բոլոր գաւառնե-
րուն մէջ՝ վիճակը ալ աւելի վատ-
թարացնող բան մը լի է կայ. սա՛ է
որ Մակեղոնիոյ միւս բնակչութիւն-
ներն ալ մշտապէս և անթօքէն հա-
լածուելով քովի թափններուն ձեռքէն,
իրենք ալ սկսած են հրոսախմբեր
կազմել և պուլկարներու վրայ յար-
ձակել: Այնպէս որ, բացի պուլկար
ներէն, այսօր Մակեղոնիոյ մէջ կը
գտնուին յոյն, ռուսներ, թուրք և ալ-
պանական հրոսախմբեր:
Ասէն կողմէ իրարանցումի աղա-
ղակներ կը լսուին, որովհետեւ վի-
ճակին ծանրութիւնը ակներեւ է և
մտաւորաւէն պայթում մը կը սպառ-
նայ:

տարբեր միջավայրի մը ազդեցու-
թեան. կազատի իր աւանդական
նախապաշարութիւնէն, այն օրէն
«ազգայնական սկզբունքները» կը
կորսնցնեն իրենց, ներուժութիւնը.
գուցէ կը մնան մտուները, բայց
անոնք այլևս մարդիկ կը հետա-
քըքրեն այնքան միայն, որ անհայ
մը կը հետաքըքրուի իր հնդեւոպա-
կան ճագուտով:
Մարդկային յառաջդիմութեան այս
բնական բարեշրջու՛թ ուղին քաղա-
քակրթութիւնը ինքն է որ կը գծէ:
Ու մենք քննելով իր քայլերը բնո-
րոշող իր յաջորդական երեւոյթները,
անհրաժեշտաբար այն եզրակացու-
թեանց կը յանգինք: Այս բարեշր-
ջումը, սակայն, ինչպէս բառն իսկ
կենթադրէ, շատ յամբընթաց է, ու
իր ամէն մէկ վարկեաններուն հա-
մար պէտք ունի նորանոր պահանջ-
ներու գորս պարտաւոր ենք այսօր
յրացնել իւրաքանչիւրն իս մեր սզ
գութեան սահմաններուն մէջ: Այս
պէս, մենք կը տեսնենք որ ներկայ
դարը գիտակից, անկախ ու առողջ
մտքի տէր անհատներէ կազմուած
ազգեր կը պահանջէ, ուստի ամէն
կերպով պէտք է աշխատիք իւրա-
քանչիւր անհատի մէջ գիտակցու-
թիւնը զարգացնելու, որպէսզի ա-
նոնք տեղեկարական եղբայրութեան

Երկրին խաղաղացման պաշտօնը ու-
նեցող եւրոպացիները, սպանիքը,
քաղաքային գործակալները խելքեր-
նին կորսնցուցած են, մանաւանդ ի-
րենց մէջ տիրող թշնամութեան պատ-
ճառաւ, կատարեալ անհամաձայնու-
թիւն կայ իրենց մէջ: Ոստիկանական
սպանիքը, բացի իրենց իտալացի պե-
տէն, կը պնդեն թէ խուզարկութիւն
ընելու, աղբարագրեր ընդունելու ի-
րաւունք ունին, և կրնան պատշաճը
գործադրել: Տէ Ժէօրթիս փաշա հա-
կառակը կը պնդէ և իր օգնականը
հարկադրուած է հրաժարիլ իր պաշ-
տօնէն պարզապէս իր պետին խօսք չի
կրնալ հասկցնելուն համար, Այս պա-
րագան պատճառ եղաւ որ Պոլսոյ ի-
տալական զեսպանը ետ կանչուի:
Պ. Ժիէր, ռուս քաղաքային փոխ-
պաշտօնեան վերջերս կը պնդէր որ,
ոստիկանական եւրոպացի սպանիքը
գէթ աղբարագրեր ընդունելու հա-
մար «նամակատուի զեր» կարողա-
նան կատարել: Ֆրանսայի, իտալիոյ
և Անգլիոյ ներկայացուցիչները մեր-
ժեցին այս առաջարկը, աւելի սպա-
նիքուն առաջարկին ո՞՞՞ տարով, Այս
անհամաձայնութեանց պատճառաւ,
խնդիր յանձնուեցաւ տէրութեանց
վճար, որ անշուշտ նոյնքան անորոշ
պիտի ըլլայ, որքան է կազմուած
բարենորոգումներու ծրագիրը:
Թուրքերը կը հրճուին այս քառ-
սային վիճակէն, համոզուած ըլլալով
որ բաղդը այս անգամ ալ ժպտաց ի-
րենց: Բայց Աւստրիոյ ներկայացու-
ցիչը տարբեր կը խորհի և կը պնդէ
թէ Մակեղոնիոյ զինուորականպէս
գրաւելէն զատ ուրիշ ճար չի կայ: Պ.
Միւլլեր իր այս կարծիքը քանիցս
պաշտպանած է գանապան առիթներով:
Գալով տեղական իշխանութեանց,
ատնք ու ե է նախաձեռնութիւն չու-
նին և, նոյնիսկ իրենց պետը, ըս-
տիպուած է ամէն վարկեան ելլալով
զինով հրահանգ ստանալու համար:
Հիմի փաշա կը յաջողի սակայն միւս
երկու ներկայացուցիչները արբան-
եակներու պէս իր ետեւէն քաշել, ո-
րովհետեւ երկուքն ալ զիրար կը շե-
ղոքացնեն:

Լնտ. Ռուս.

նախադուռին վրայ անկաշկանդ ու
անլիբրապահ անձնութիւններու զի-
րար ողագուրբն: Ուստի, այսօր,
անհրաժեշտ է որ, սիւրաքանչիւր
ազգ իր օրկանական մէկ անդամը
մարդկային զեղբաստանի մեծ շղթա-
յին, իր խառնուածքին եւ ընդու-
նակութեանց համեմատ կարենայ մա-
տակարարել իր բաժին-աշխատանքը
ընդհանուր քաղաքակրթութեան գոր-
ծին համար):
Վերջապէս հոս շեշտենք թէ մի-
ջազգայնութեան ձգտումները երբէք
չեն խանգարեր որ մարդիկ միան-
գամայն անկախ ու բուռն հայրենա-
սէրներ ըլլան այսօր՝ երբ մարդկու-
թիւնը դեռ պէտք ունի «անջատա-
կան» կազմակերպութեան, երբ դեռ
ազգերը չեն հասած այն բարձրու-
թեան ուր կարողանան եղբայրօրէն
զիրար գրկելու: Միջազգայնութեան
ամենահոյակապ յառաջապահները,
Պէպլէ, Լիպկինիստ, Կառլաքի, Ժան
Ժորէս, Ժիւլ Կլոտ, ամէն առիթով
բարձրագոյն կը յայտարարեն իրենց
համամարդկային դաւանանքներուն
առ ընթեր՝ նաեւ իրենց ջերմ հայ-
րենասիրական սրտացումները, իւրայն
կօհիչէ, Ֆրանսացի ամենէն հոշակա-
ւոր հրապարակախօսը, միանգամայն
ծայրայեղօրէն միջազգայնական, կը
գրէ պարզապէս. «Ես միջազգայնա-

— 0 —

Ն. Յ. Պ. է այս օրուան նախա-
օրուածը խիստ սպառնական բը-
նութիւն մը ունի Ռուսիոյ հան-
դէպ: Յօդուածը կարգալէ յետոյ
մարդ ակամայ կը յիշէ միախճանը
մօտեցած շան մզկիթի բակը եր-
թալու առածը... Այնքան սպուշ,
և այնքան յիմար քայլ մը են
ըրբ Ռուսները, որ, ինչպէս կը-
սեն, եփած հաւն անգամ կը խն-
դայ ռուսական ուղեղներուն վը-
րայ... Ահա գէպքը:

Ինչպէս յայտնի է, քանի մը
օրեր առաջ, ռուսական երկու
կամաւորներու նաւեր Պետերս-
բուրգ և Եմօրենսք Սարոն ու Տար
տանելն անցան առանց Սուրբանի
արտօնութեան, իբրեւ պարզ վա-
ճառականական նաւեր: Այս եր-
կու նաւերը, սակայն Սուէզի ջը-
րանցքն հասնելով՝ դիմակները
մեկդի նետած՝ այս անգամ իբ-
րեւ պատերազմական նաւեր, բաց
ծովուն վրայ ձերբակալեցին մէկ
անգլիական և մէկ ալ զերմանա-
կան ապրանքատար անամակատար
նաւեր: Նաւերու մէջ գտնուած
ձարոնիա հասնելիք բոլոր յանձ-
նարարութիւններն ու նախապիտե-
րը հետեւաբար Ռուսները կը գը-
րաւեն, որու լուրը պատերազմ
յայտարարելու շանի գրգռած են
թէ Անգլիան և թէ Գերմանիան:
Անգլիա արդէն հրամայած է իր
Միջօրկրականի նաւատորմին ան-
յայաղ Սուէզ երթոյն... Ռուսնե-
րուն հետ տեսնուելու: Գերմա-
նիան դեռ քայլ մը չէ առած, և
ինչպէս իր պաշտօնական օրկանը
կը յայտարարէ. Գերման կառա-

ցած եմ, բայց ասիկա չի նշանակեր
որ ես ապագայնացած եմ: Ես մի-
ջազգայնական եմ խելքով, իսկ Ֆը-
րանսացի եմ սրտով, մեր ցեղին պա-
կասութիւններով ու արժանաւորու-
թիւններով: Ես բոլոր մարդոց հա-
մար բացարձակ արդարութեան կու-
զեմ, եւ եթէ անոր իրագործումը
ինձմէ կախում ունենար, ամէնէն
առաջ մեր մէջ կիրագործէին զայն:
Կարելի էր անսպառ օրինակներ
բերել միջազգայնութեան ներկայա-
ցուցիչներէն, բայց ընթերցողը կը
ձգենք որ աւելի լայն օրինակները
նոյնիսկ Պ. Վարանդեանի գրքոյի կը-
սելով որ միջազգայնութիւնն ու ազ-
գայնականութիւնը ոչ միայն զիրար
չեն հակասեր, այլ զիրար կամբող-
ջացնեն, կը լրացնեն: Եւ Պ. Վա-
րանդեան ալ ճիշտ այդ եզրակացու-
թեան է որ կը յանգի վերջապէս:
«Ոչ մարդատեաց վնասակար շօլի-
նիզմ, ոչ էլ ծոյլ, դատարկ կօմօ-
պօլիտիզմ—կը գոչէ իր գրքոյի մէջ
—այլ անաղարտ հայրենասիրութիւն
միացած ինտերնացիօնալիզմի գաղա-
փարին հետ—անա ժամանակակից ճը-
մարիտ ինտելիգենտ մարդու գաւա-
նանքը»:
Շարունակելի)

վարութիւնը կ'սպասէ ուս կառավարութեան բացատրութեանը, որու համեմատ պիտի վճարուին քայլեր առնէ Անգլիոյ հետ միացած ։

Ն. Պ. Ա. էն թէ իր խմբագրութեան կարծիքով, և թէ մասնաւորապէս այդ առթիւ գրուած վիճենայի համալսարանի միջազգային և ծովային բրաունքներու ուսուցչապետի կարծիքով կը հաստատէ, որ ուսական կամաւոր նուերու այդ նենգ վարմունքը, ոչ թէ միայն վիրաւորանք մըն է միջազգային իրաւունքներու, այլ նաեւ վիրաւորանք անգլիական և գերմանական ազգերու պատուին ։ Հետաքրքիր են Ն. Պ. Ա. ի հետեւեալ գիտողութիւնները ։

— 1841 ի դաշնագրութեան հիման վրայ թիւրքական նշանները միայն թիւրք պատերազմական նաւերուն համար ազատ է ։ 1856 ի Փարիզեան խաղաղութեան ժամանակ, այս պայմանը անխախտ մնաց ։ Ռուսական կամաւոր նաւերը, ինչպէ՞ս կ'ըլլայ որ Ռուսորէն ու ծարաւաններն իրեն հասարակ նաւեր անցնելով յանկարծ Սուէզի ջրանցքի վրայ ծովային ուստիկանութեան պաշտօնը կ'ստանան... որովհետեւ, թողնենք, որ այս պարագային ուստները ծայրէ ծար աւիրաւ են ծարունիայ զրկուած յանձնարարութիւններն ու նամակները գրաւել, քանի որ անոնք պատերազմական որեւէ գաղտնիք չեն կարող հազորդել Մանչուրիոյ մասին Անգլիայէն կամ Գերմանիայէն միայն պատերազմական նաւերը իրաւունք ունին կասկածուած օտար նաւերը այցելելու քննել ։

Այդ մասին մանրամասն խօսելով կ'աւելցնենք — Պոլսու կառավարութիւնը, որու քաղաքական վարիչները այնքան հարուստ են ծանր սխալներով իր այս վարմունքով բռնի կերպով եւրոպայի տրամագրութիւնը իր դէմ կը լարէ ։ Իր այս ողբերգական վիճակին մէջ, արգեօ՞ք եւրոպայի զէնքը իր սահմաններուն գարծա՞ծ կուզէ տեսնել... ։

Ահա թէ ի՞նչ ծիծաղելի ապշութիւններու կրնայ հասցնել բռնապետական ղեկավարը աշխարհը գողացնող հզոր կայսրութիւն մը ։

« Կըջք օրհասականք հզորագոյնս կուռիւն », կըսէ հայկական առածը ։ Եւ յիշաւի բացի Մանչուրիայէ, ուսական գնտակները ուզում են և անհնազանդ Ռուսներու, Ֆինլանտացիներու, Լեհերու, Հայերու և Հրէաներու դէմ... բայց այդ ալ քիչ է, պէտք է դարձնել ուսական յաղթական թնդանթներու բերանները և եւրոպայի վրայ, և... և անկէ վերջը... է՛հ անկէ վերջն ալ մզկիթի բակէն ներս... ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

— 0 —

Ձինովիէվ, ուսաց Պոլսոյ դեպարտմէն Սուլթանին յայտարարած է որ ուս կառավարութիւնը զօրք պիտի զրկէ սահմանազուխը հայ հրոսխմբերուն արգիլելու որ թուրքաց-Հայաստան շանցնին ։

— Պոլսէն յուլիս 7 ին կը հաղորդեն որ Գուշ գտնուող հիւպատոսներէն եկած տեղեկութիւնները կը հաստատեն որ գաւառին մէջ խաղաղութիւնը կը տիրէ, հայահատիկ կը բաժնուի թէ ուտելու և թէ սերմնացանի համար, թէեւ ոչ զօհացուցիչ չափով, Հիւպատոսները շուտով իրենց ընդարձակ տեղեկագիրները պիտի զրկեն դեսպաններուն ։

— Յուլիս 6 ին « Տի. Յարթ » թերթը Պոլսէն կ'իմանայ թէ Բ. Գուշը Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ նօթայ մը զրկած է որով կը յայտարարէ թէ հայերու յեղափոխական գործունէութիւնը վերջերս շատ զօրեղացած է, Հայերը մեծ բռնութիւններ կը կատարեն թուրքերուն, մանաւանդ թուրք զինուորներուն վրայ ։ Հայկական ապստամբութիւնը կապ ունի վերջերս Մակեդոնացիներու կողմէն կատարուած դաւադրական գործերուն հետ ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուս կառավարութիւնը 78 թուականի պատերազմէն մնացած ամբողջ պարտքը կը պահանջէ թուրք կառավարութենէն ։

— Պոլսկարիոյ փոստ-հեռագրական վարչութեան տնօրէնը Պոլիս կը գտնուի, թուրքիոյ հետ հաղորդակցութեանց դաշնագրութիւն մը կ'ընթելու բանակցութեանց համար ։

— Պոլսոյ օստիկանութիւնը թաքստի տներէն միոյն մէջ պահուած պայթուցիկ նիւթեր գտնուէ ։ Տունը կը գտնուի Պիլիպիկ փողոցին մէջ և կը պատկանի Եանի կոչուած մարդուն որ ջրային ընկերութեան մէջ պաշտօնեայ է ։

ՌՈՒՍԻԱ

Վարչապայի մէջ ընկերվարականները կարմիր դրօշակներ ծածանելով ցոյցեր ըրեր են ։ Կօչաքները ցրուեր են ցուցարարները ։

— Բեթերսպուրկէն Պերլին կը հեռագրեն որ Պոպրիքովը սպանուիին հայրը բանտին մէջ հիւանդ է և վախ կայ թէ կը մեռնի ։

— Կը կարծուի թէ Բազանի մէջ պատկերները գողցուած են խը

ուովութիւններ հանելու դիտարարութեամբ ։

— Գանձակի փոխ-նահանգապետը սպաննուած է բուլվարդին վրայ, տհազին բազմութեան մը մէջ ։ Թէեւ սպաննողը փախած է բայց այդ առթիւ հայ մը ձերբակալուած է ։

Անտրէեզի Ռէֆօլփերի վեց հարուած բնդունած է ետեւէն ։

— Ռուսական բայ ձր շրջանակներու մէջ ի նպաստ հրէաներու համակրութիւն մը զարթած է ։ Իգնատիէվի 1882 ի օրէնքը հրէաներուն վերաբերմամբ պիտի գործագրուի, ըստ որում հրէաները պիտի կարենան բնակութիւն հաստատել և Ռուսիոյ ներքին գիւղերու մէջ ։

ԱՆԳԼԻԱ

« Տէլը Էքսպրէս » թերթը կը հաղորդէ որ Անգլիական կառավարութեան կողմէն մասնաւոր սուրհանդակ մը գացած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարին Անգլիական Մալակա նաւը ձերբակալուելուն համար ։

— Անգլիա խիստ գիմումներ պիտի ընէ նաեւ թուրքիոյ որ Ռուսիոյ թող տուած է Բոսֆորէն նաւեր անցնել ։

— Երեսփոխանական ժողովին մէջ Պալֆուր պատասխանած է որ Մալակա նաւին ձերբակալումը շատ ծանր գործ մըն է և կառավարութիւնը տրամադիր է մանրամասնօրէն քննել այդ գործը ։

— Ընդդիմադիր լուսակցութիւնը ամեն կերպ իր աջակցութիւնը խոստացած է կառավարութեան Անգլիական պատիւը և միջազգային դաշնագրութիւնները պաշտպանելու համար, որոնք խանգարուած են Ռուսիոյ պատերազմական նաւերուն Բոսֆորէն անցնելովը ։

— Անգլիական կառավարութիւնը զրահաւորներ զրկած է Միջերկրական ծովի մէջ ուսական զրահաւորները հետապնդելու համար ։

— Բեթերսպուրկէն յուլիս 7 ին « Դէօթէր » գործակալութեան կը հաղորդեն թէ Անգլիական կառավարութիւնը Ռուսիոյ խիստ բողոքագիր մը զրկած է Մալակայի ձերբակալման առթիւ ։

Անգլիական գեսպանը Մալագայի անմիջական ազատումը կը պահանջէ, ինչպէս և նախ մէջ գտնուած մթերքներունը, որոնք կը պատկանին Բրիտանական կառավարութեան և կը վերաբերի Ձինական ծովուն մէջ գտնուող Անգլիական նաւատորմիդին ։

Բողոքագիրը կը վերջանայ ազդարարութեամբ ծանր հետեւաւ քննելու մասին ։

ՌՈՒՍ—ՀԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բեթերսպուրկէն Պերլին շերտուած պաշտօնական հեռագիր մը կը հաղորդէ թէ Գուրոբաթ քին տեղեկագրած է որ ճալոնացիները մեծ թիւով Լեւոսան կի ճամբով կը յառաջանան զէպի Երկոզէն ։

— Լոնտօնէն կը հեռագրեն թէ ուս զօրավար Գէլլերը հալածող ճարտական հեծելազօրքը Մուկտէն հասեր է ։

— Տէլը Գրօնիքը թերթը կ'իմանայ թէ Ռուսն Հայպիեզի քովը կ'սպասէ իրեն օգնութեան եկող զօրքին ։

— Թուրքիէն կը հեռագրեն թէ ճարտական կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարած է որ ինք պաշտօնական ոչ մէկ դիմում ըրած է Ձին կառավարութեան Մանչուրիոյ գրաւուած մասերուն վարչութիւնը Ձինատանի յանձնելու համար ։

— Թուրքիոյն « Պերլին » թագաւոր թերթին կը հեռագրեն թէ Պ. թիւնիլիզի քով եղած ճակատամարտի միջոցին ուստները 40,000 էին իսկ ճարտնցիները 30,000 ։ չը նայնով ուստներու թւական աւելում թեան, կրկին անոնք պարտուած են ։ Ըստ Գուրոբաթ քինի տեղեկագրին այդ ճակատամարտին մէջ ուստները հազար հոգի կորուստ ունին ։

Ն ՄԱԿԱՏՈՒՓ

Սուր Դիտող. — Հաճեցէք կարեւաւելի մշակուած գրիչ ձեր թղթակցութիւնը ։ Հարկ չի կայ ազատներու արարքով զբաղեցնել հասարակութիւնը ։ Պէտք է աշխատել ձեր մէջ մաքրելու տեղական գոյն ունեցող այդ խնդիրները ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՒԷՐ

Թաղական Խորհուրդս ներկայիս կը փութայ հրաւիրել քաղաքիս արգոյ հայ հասարակութիւնը, վարկ կրեարկէ, 41 յունիս, ի ժամ 10 առաւօտեան, առ ի խորհրդակցութիւն ի ստորու նշանակեալ կարեւոր խնդրոյ ։

Ա. Շինութիւն Ա. Եկեղեցւոյ շերտապակին ։

Բ. Նորագութիւն Աղջկանց վարժարանի ։

Գ. Կարգադրութիւնք ազգային երկսեռ վարժարանաց նոր տարիւն շանի առթիւ ։

Դ. Խայոյս ենք որ քաղաքիս գաւառարժան ազգայինները պիտի փութան անձամբ պատասխանել հրաւերին ։

Ներկայ գտնուելով նոյն օրը որոշեալ ժամուկ յԱզգ. Խորհրդարանի ի զիմաց Թաղ. Խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ

Ն. Գ. Բիւսանեան Խ. Ազնաւուրեան Վառնա 6 յուլիս 1904 (ԵՆԻՔ)

ОТГОВОРНЫЕ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Враинность“ Варна